



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կողմից 2018 թվականի 1-ին
եռամսյակում 170/18 ծածկագրով «Պահեստների համար դարակաշարեր»
մրցույթի մոնիթորինգի արդյունքների վերաբերյալ**

ԵՐԵՎԱՆ 2018

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի գնումների առանձին գործարքների մոնիթորինգի արդյունքները

Մոնիթորինգի իրականացման հիմքը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հունիսի 25-ի №207Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում 1) հանրային կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ սահմանված լրացուցիչ պահանջների կատարման մոնիթորինգի կարգ:

Մոնիթորինգի օբյեկտը՝ «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ (այսուհետ նաև Ընկերություն):

Մոնիթորինգի առարկան՝ Ընկերության կողմից 2018 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում իրականացված գնումների առանձին գործարքները:

Մոնիթորինգի նպատակը՝ Ընկերության կողմից կատարված գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրություն և համապատասխանության գնահատում Հանձնաժողովի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի №391Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում 2) սահմանված լրացուցիչ պահանջներին:

Մոնիթորինգի իրականացման ժամկետը՝ 2018 թվականի մայիսի 15-ից մինչև 2018 թվականի հոկտեմբերի 17-ը:

Մոնիթորինգի մեթոդաբանությունը՝ Ընկերության գնումների առանձին գործարքների մոնիթորինգն իրականացվել է ընկերության կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրության, գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարի ընտրության ընթացակարգի մոնիթորինգի միջոցով:

«Պահեստների համար դարակաշարեր» բաց մրցույթ

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն հիմք ընդունելով Ընկերության կողմից հաստատված գնումների կարգի 7.4.2 կետը կազմակերպել և անցկացրել է «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ կարիքների համար պահեստների համար դարակաշարերի ձեռքբերման բաց մրցույթ:

Հայտարարությունը ՀՀ ֆինանսների նախարարության էլեկտրոնային տեղեկագրում հրապարակվել է 2018 թվականի հունվարի 17-ին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2018 թվականի փետրվարի 1-ը:

Մրցույթի հայտարարումից հետո բաց առաջարկների հարցման հրավերին համապատասխան կարգով հայտ է ներկայացրել չորս մասնակից՝ «ԴԱՎԻԹ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն, «123» ՍՊԸ-ն, «Վերտֆոյ» ՍՊԸ-ն և «ՌԱՕ Մարս» ՓԲԸ-ն, որոնց հայտերն համարվել են հրավերի պահանջներին համապատասխան և տրվել է հնարավորություն մասնակցելու էլեկտրոնային եղանակով գնային առաջարկ ներկայացնելու փուլին:

Ներկայացված գնային առաջարկները բերված են ստորև.

Ընկերության անվանումը	Առաջարկած գին հազ դրամ առանց ԱԱՀ
1	2
«123» ՍՊԸ	10 300,0
«Դավիթ Էներջի» ՍՊԸ	10 400,0
«ՌԱՕ Մարս» ՓԲԸ	13 000,0
«Վերտֆոյ» ՍՊԸ	13 500,0

Հաղթող է ճանաչվել «123» ՍՊԸ-ն՝ հայտի գինը 10 300 հազար ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:

«ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի կարիքների համար «Պահեստների համար դարակաշարեր» բաց մրցույթի փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կարելի է փաստել որ.

1. «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ն գնման ընթացակարգի փաստաթղթերը և կատարվելիք աշխատանքների բնութագրերը կազմել է պատշաճ մակարդակով:
2. Նախքան մրցույթ հայտարարելն ընկերությունն իրականացրել է շուկայի ուսումնասիրություն, ինչի վերաբերյալ փաստաթղթերը կցված են մրցութային փաթեթին:
3. Պայմանագրով սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ:



**ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՆՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹ**

Ընկերության անվանում «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ

Գնման անվանումը «Պահեստների համար դարակաշարեր»

Գնման ծածկագիրը 170/18

Գնման ձևը Բաց մրցույթ

ԲՈԼՈՐ ՓՈՒԼԵՐԸ

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
1 Համարժեք և համապատասխան գրառումները պահպանվում են գնումների գործընթացի ողջ ընթացքում և մոնիթորինգ իրականացնելու համար բավարար տեղեկատվություն են պարունակում	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

ԳՆՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
2 Գնման հայտը հաստատել է կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը կամ վերջինիս կողմից լիազորված անձը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
3 Գործարքի համար կիրառվող գնման մեթոդի ընտրությունը ճիշտ է կատարվել	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
4 Մինչև գնումների հրավերների հրապարակելն իրականացվել է համապատասխան շուկայի ուսումնասիրություն	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

Ստուգաթերթի պայման	Ա Ո Չ/Ո	Մեկնաբանություններ
(փաստաթղթերը կցված են)		
5 Գնման գործընթացի արդյունավետ իրականացման, ոչ մրցութային եղանակով գնումների ծավալի նվազեցման նպատակով՝ ընկերությունը իր վեբ կայքում և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակելուց բացի դիմել է արդյոք այլ միջոցների մասնակիցների շրջանակը ընդլայնելու և նրանց միջև մրցակցության խրախուսման համար	<input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Հայտարարությունը հրապարակվել է նաև tender.am կայքում և «Հայկական ժամանակ» օրաթերթում:
6 Մասնակից մատակարարների հայտերի ընդունման գործընթացում ապահովվել է արդարությունն ու անկողմնակալությունը	<input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ստուգաթերթի պայման	Ա Ո Չ/Ո	Մեկնաբանություններ
7 Ապահովվել են հավասար մրցակցային պայմաններ հնարավոր մասնակիցների համար	<input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	
8 Գնման առարկայի բնութագիրը հանգեցնում է գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը	<input type="checkbox"/> <input checked="" type="checkbox"/> <input type="checkbox"/>	
9 Գնումը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input checked="" type="checkbox"/>	

10	Մանրամասն ներկայացված են գնման ընթացակարգի փաստաթղթերը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
11	Պատշաճ ձևով ներկայացված են ապրանքների տեխնիկական բնութագրերը, իսկ աշխատանքների կամ ծառայությունների դեպքում՝ ամբողջական նկարագրությունը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
12	Ամբողջությամբ և հստակ նկարագրված են ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարմենաբանությունը	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
13	Գնման առարկայի հատկանիշները պահանջ կամ հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրի, էսքիզի կամ մոդելի, ծագման երկրի, կոնկրետ աղբյուրի կամ արտադրողի	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
14 Հայտերի գնահատման ընթացակարգը ընթացել է արդար և անկողմնակալ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
15 Պայմանագիր կնքելու մասին որոշումը պարունակում է ամփոփ տեղեկատվություն հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրությունը հիմնավորող պատճառների մասին	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
16 Հայտերի գնահատման ժամանակ ապահովվել է հատուցում արժեքի դիմաց սկզբունքը	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	Ընկերությունը մրցութային փաստաթղթերում շուկայի ուսումնասիրության արդյունքներ չի ներկայացրել:

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
17 Պայմանագրի գնի հաշվարկը ներառում է տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը)	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Ստուգաթերթի պայման	Ա	Ո	Զ/Ո	Մեկնաբանություններ
19 Սահմանվել է վճարման ողջամիտ ժամկետ	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
20 Գնման պայմանագիրը կատարվել է պատշաճ մակարդակով	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	
21 Գնման առարկայի արժեքը համապատասխան է շուկայական արժեքին	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input checked="" type="checkbox"/>	Տվյալ աշխատանքների կատարման շուկայական արժեքների տվյալներ հանձնաժողովը չունի: